



ՄԱՏՈՒԹԻ ԾԻԵՐԸԿՆԵՐՈՒՄ

(Օ. ՇՐԱՑՆԵՐԻ)



որս մերկ պատեր են. նոցա վերալ նկարուած է Յիսուսի պատկերը, խաչը ուսին, աստուածային Մանուկը մասամբ եղծուած, Ամենասուրբ Կուսը կապուտ ու կարմիր հանդերձներում, հռովմէական զինուորներ և էլի Քրիստոսը ձեռները կապկը-պած: Կտուրը փուլ է եկած և վերևից երևում է բաց երկնքը, իտալական կապուտ երկինքը. անձրեւ ծակոտիքներ է բացել պատերի մէջ, իսկ ոոցա ծեփը արդէն թափւում է ինքն իրան: Մատուռը մէն մենակ է, բարձրմի տեղ, հրուտնդանի հէնց գագաթին, և գիշեր ցերեկ ծովի ալիքները խփւում են նորա ստորոտին: Ոմանք ասում են, որ շինած է այնտեղ՝ ներքեւ—կղզու վերալ ապրող կրօնաւորների շեռքով, որպէս զի կարողանան իրանց նեղացած-հիւանդներին տանել այնտեղ: Միւսները, թէ

մեծ ճանապարհով անցնող կրօնաւորներն ու ուղևորներն են կառուցել, որ իբրև օթևան և աղօթատեղի ծառալէ իրանց: Բայց ալժմ էլ ոչ ոք չէ իջևանում մատուռում աղօթելու, և ալլ ևս հիւանդներ չեն տանում բժշկութեան համար:

Մատուռի ետևից անցնում է հռովմէական հին ճանապարհը: Եթէ մի կերպ բարձրանաք ալնտեղ բոլորովին միայնակ և մի ջերմ, արև օր նստէք, ձեզ ալնպէս կթուալ, թէ քարալատակի վերալ լսում էք հռովմէական զինուորների քալլերի ձայնը, նոցա զէնքերի շաշիւնը և այն հեռաւոր ժամանակների լուշերը, երբ Աննիբալն իւր զօրքերով ներս էր խուժում թաւուտի մէջ, իսկ ալստեղ էլ աւելի ճանապարհ չկար: Ալժմ կատարեալ լուութիւն էր տիրում: Ժամանակ առ ժամանակ քարալատակի քարերի վերալից ջորու ոտնաձայնը կլսէք — դա գեղջկուհին է, որ կողովների մէջտեղը նըստած՝ անց է կենում. կամ կտեսնէք մի պառաւ, գլխին կապոց դրած գնալիս, և կամ աւազակալին զարհուրելի կերպարանքով մի մարդ, դագանակը ձետին, շտապով անցնելիս ճանապարհով: Բայց ալնուամենալիւ մատուռը մէն մենակ է կանգնած: Նորա երկու կողքերից ծովածոցերն են և նորա ձայնը հնչում է ծովի ալիքների խփուելուց նոյն իսկ ստորոտում:

Ես գնացի ալնտեղ մի ձմեռուալ օր, երբ կէսօրին ջերմ արել ամեն ինչ ալրում էր: Հին ճանապարհի վերալ: Ես լոգնեցի, և ճանապարհը զառիվեր թուաց ինձ: Մտայ մատուռը, մօտեցալ քարուքանդ լուսամտին և սկսալ նայել դէպի ծովը: Կեռու, հեռու ծոցի կապուտ ջրի ետեղ երեսում էին քաղաքներ և գիւղեր, որոնք ինչպէս սպիտակ և կարմիր բծեր ցրուած էին լեռների կանաչ փեշերի վերալ, իսկ լեռների գագաթները բարձրանում էին գըեթէ մինչև երկինք, որոնք երբեմն երեսում էին, ու

երբեմն էլ ամպերի տակ ծածկւում։ Ինձ թւում էր՝
որ գագաթները կանչում են ինձ իրանց մօտ, բայց
գիտեմ, որ երբէք ոչ մի կամուրջ միացնել չէ կարող
ինձ նոցա հետ, երբէք, երբէք։ Ես աչքերս ծածկեցի-
ձեռքերով և երեսս շուռ տուի։ Այդ տեսարանն անտա-
նելի էր ինձ համար։

Ես սկսալ մանգալ մատուռի աւերակներում, նա-
յեցի խաչակիր Յիսուսին, Մանուկ-Փրկչին, հռովմէական
զինուորներին, նոցա ծտլած ձեռներին և դուրս եկաբ
բաց գաւիթն ու նստեցի քարի վերար Ոտներիս առջև
փոքրիկ ծովախորշ կար ու մի շարք սպիտակ տներ,
որոնք թաղուած էին ձիթենու ծառերի կանաչի մէջ,
իսկ ալիքների սպիտակ փրփուրը ինչպէս մի երկալն
նեղ ժապաւէն պատում էր ծովափը. յոգնած լինելով՝
ես թինկը տուի ծնկանս վերար, Ես չափազանց յոգնել
էի—յոգնածութիւնս ինձ օրուայ տապից աւելի հին էր
թւում, հռովմէական հին ճանապարհի քարերի արևա-
կէզից հին, և ես գլուխս ծնկանս դրի ու սկսեցի ականչ
դնել երեք հարիւր ոտնաչափ ինձանից ներքև խփուող
ալիքներին և ձիթենու ճիւղերի ու հին կամարների
միջև շառաչող հողմին, և քունս տարաւ։ Քնի մէջ մի
երազ տեսալ.

Մարդը աղերսում էր Աստծուն և Աստուած Հրեշ-
տակին ուղարկեց նորան օգնութիւն. Հրեշտակը դար-
ձաւ և ասաց.

«Ես այս մարդուն օգնել չեմ կարող»։

«Ի՞նչ է նորա ուղածը։ ասաց Աստուած։

Հրեշտակը պատասխանեց. «անդադար աղաղակում
ու կոծում է, որ մէկը անպատուել է իրան և որ ինքը
ցանկանում է նորան ներել, բայց չէ կարող»։

Աստուած ասաց. «Դու ինչ արիր նորա համար»։

Հրեշտակը պատասխանեց. «Ամեն բան։ Բոնեցի»

ձեռքից և ասացի. լսիր, երբ այս մարդու մասին վատ
բան ասեն. դու լտւ խօսիր. ծածուկ, նորա համար ան-
նկատելի կերպով օգնիր, ուր և կարող լինիս. մասնա-
տրիր նորան այն ամենից, ինչ որ ամենից թանգ բան-
ունիս, և հետզհետէ, այս կերպով ծառայելով՝ կզգաս-
որ շահել ես նորա սիրտը և որ ներել ես նորան։ Եւ
մարդը ասաց. «Հաւ, ես ալդ կանեմ»։ Բայց յետով մի-
մուլթ գիշեր նորից լսեցի նորա հեծկլտոցը. «Ամեն բան
արի! Ոչ մի միջոց չէ օգնում։ Ես չեմ թեթևանում լոկ-
այն բանով, որ լաւ եմ խօսում նորա մասին։ Եւ թէ-
կուզ հէնց սեպհական արիւնս թափեմ նորա համար.,
Ելի չեմ կարող սրտիս ատելութիւնը ոչնչացնել։ Չեմ
կարողանում ներել, ով Աստուած, չեմ կարողանում, չէ»։

Ապա նորան ասացի. «Նայիր այս կողմ, տես քո-
անցեալը, մանուկ հասակիցդ սկսած, տես քո փոքր-
կութիւնն ու անարդարութիւնը, լաւ նայիր բոլոր սխալ-
ներիդ և պակասութիւններիդ վերայ և մբթէ այնու-
հետեւ նոյն իսկ կեանքիդ լրտի տակ չես տեսնի եղբօրդ-
ինչպէս մի տարբեր մարդ։ Միթէ դու այնքան անմեղ-
ես, որ իրաւունք ես համարում ուրիշին ատել։»

Եւ նա նայեց ու ասաց. «այո՛, ուղիղ ես ասում,
ես ևս մեղանչել եմ և ներում եմ եղբալը ակցիս։ Բա-
ւական է, գնա՞—ես ներեցի։ Նո հանգիստ պարկեց և
ձեռքերը խաչեց կրծքին, և ես մտածեցի, որ արդէն
մարդու հոգին հանգստութիւն գտաւ։ Բայց դեռ թեմքը-
չէի թափահարել երկինք բարձրանալու համար, երբ
նորից վայնասուն լսեցի երկրի վերալ. ես ներել չեմ.
կարող, ով Աստուած, չեմ կարող։ Աւելի լաւ է մեռ-
նեմ, քան ատեմ։ Ես չեմ կարող ներել։»

Ես մօտ գնացի նորա կացարանին և մթան սէջ-
կանգնեցի դրան ետև ու լսեցի նորա աղաղակը.

«Ես էլ եմ մեղանչել, բայց ոչ ալդպէս։ Եթէ եւ,

երբ և իցէ ընկերակցիս մի չնչին վէրք եմ հասցըել, ծունկ եմ չոքել նորա առաջ և սկսել եմ համբուրել նորա վէրքը մինչև որ բժշկուել է։ Ես չեմ թոյլ տուել, որ ում և իցէ հոգին կորչի դէպ ինձ ունեցած ատելութեան շնորհիւ։ Եւ եթէ ով և իցէ թէկուզ հէնց մտքովն անց է կացըել, որ ես վիրաւորել եմ նորան, ես նորա առաջ երեսնիվալը եմ ընկել, որ ոտներով տրորէ ինձ և ալսպիսով, տեսնելով իմ նուաստանալը իւր առջե, կարողանալ ներել ինձ և հոգի չկորցնէ։ Բայց իմ հոգու մասին ոչ ոք չէ մտածել, ոչ ոք չէ կամեցել փըրկել ինձ կորսաթից և ոչ մի քայլ չէ արել, որով ես կառղանալի նորան ներել։

Ես նորան ասացի, «Ասիր, հանգստացիր։ Եթէ չես կարող, ուղեմն մի՛ ներիր քեզ վիրաւորողին, բայց մոռացիր նորան և նորա արածը, մոռացիր և ապրիր առաջուալ պէս։ Գուցէ միւս կեանքում»...

«Նեռացիր գնա, աղաղակեց նա, ինչ եմ անում միւս կեանքը։ Ես կորչում եմ ալժմ, հէնց իսկոյն։ Արեկ լոյս տեսնել չեմ կարողանում, աչքերս փոշիով լիքն են և կոկորդս աւազով։ Հեռացիր, ախ, երանի՛ թէ կեանքումս գոնէ մէկ անդամ տեսնէի, թէ ինչ սիրուն է լոյս աշխարհի։ Աստուած իմ, Աստուած։ Ես չեմ կարող առանց սիրելու ապրել, չեմ կարող ապրել ատելով։»

Ալսպէս ուրեմն, ես նորան թողի լաց ու կոծի մէջ և դարձալ քեզ մօտ, Տէր։

Եւ Տէրը ասաց. «Այդ մարդու հոգին պէտք է փրկել։»

Հրեշտակը հարցրեց. «Ի՞նչպէս աղատենք»։

Աստուած ասաց. «Դարձիր գնա երկրի վերալ և աղատիր»։

Հրեշտակը հարցրեց. «Ի՞նչ անեմ, ինչպէս աղատեմ»։

Տէրը խոնարհեց դէպի հրեշտակը ու ինչոր շնչաց

ականջին, և Հրեշտակը թևերը տարածեց ու ցած թռաւ դէպի երկիր:

Ես արդէն զարթել էի, գլուխս ծնկանս վերալ կախած և նստած քարի վերալ, բայց ոլժ չունէի վերկենալու: Ես լսեցի, թէ ինչպէս հողմը շառաչում էր ձիթենի ճիւղերի ու աւերակների կամարների միջով — և դարձեալ քննեցի:

Հրեշտակը գարձաւ երկիրս, գտաւ մարդուն կարծրացած սրտով, ձեռքից բռնեց և տարաւ մի տեղ:

Մարդը ոչ գիտէր թէ ուր է տանում իրան Հրեշտակը, և ոչ էլ թէ ինչ պէտք է ցոյց տար նորան: Երբ նոքա հասան, Հրեշտակը թեռվ ծածկեց մարդու կերպարանքը, և երբ թեռ յետ տարաւ, մարդը իւր առաջ ինչոր տեսաւ գետնի վերալ: Աստուած Հրեշտակին իրաւունք էր տուել մարդկալին հօգին մերկացնել և վեր առնել նորանից այն արտաքին յատկանիշները, ձեերը, գոյնը, հասակը և սեռը, որոնք մարդուն որոշում են մնացեալ բոլոր իւր նմանակիցներից, և այդ հօգին ալժմ գրուած էր իւր առաջ նոյնպիսի մերկ գրութեամբ, ինչպէս որ մարդ տեսնում է նորան, երբ իւր հայեացքները ուղղում է դէպի ներս:

Եւ նոքա տեսան իրանց առաջ նօրա ամբողջ անցեալը: մանր աճող կեանքն ու մանկութիւնը իւր անմեղութեան քնքոյշ աղուամազով, տեսան թէ ինչպէս այդ աղուամազը փոքր տու փոքր ոչնչանում էր և տեղի էր տալիս երիտասարդութեան, ինչպէս մատաղ կեանքը ագահ շուրթերով խոնարհում էր դէպի կեանքի մեծ աւագանը, և ինչպէս նորա կողքից ջուրը ցած էր թափւում: նոքա տեսան բոլոր շիրականացած լուսերն և մտքի ու սրտի այն մոլորութիւնները, որոնց մարդիկ մեղք են անուանում, և ներքին լուսափալլութեան այն վալրկեանները, որոնց մարդիկ կոչում են արդարու-

թիւն, նորա կարողութեան և ոլժի օրերը, երբ վերանալով գոչում էր նա. «Ես ամենակարող եմ» և փռքըոգութեան ու թուլութեան օրերը, երբ վայր էր ընկնում գետին և փռուած պարկում հողի վերայ. տեսան ամենը, թէ ինչ կարող էր լինել այդ հոգին, բայց որ երբէք չէ լինում:

Եւ մարդը գլուխը կախեց:

Հրեշտակը հարցրեց նորան. «Սա Բնչ է»:

Մարդը պատասխանեց. «այդ ես եմ, ես ինքս եմ»:
Եւ նա մի շարժում արաւ, որով կարծես ուզում էր իրան սղմել այդ հոգին, բայց Հրեշտակը լետ պահեց և ծածկեց նորա աչքերը:

Աստուած Հրեշտակին իրաւունք էր տուել նաև հոգու միջից հանել ժամանակի, տարածութեան և հանգամանքների այն արտաքին լատկանիշները, որոնք մարդկային անհատուկան կեանքը որոշում են ամբողջ տիեզերական կեանքից:

Եւ Հրեշտակը նորից բացեց մարդու աչքերը ու սա թափանցեց:

Նա տեսաւ իւր տռաջ, որ մի փոքրիկ կաթիլի մէջ ցոլանում է ամբողջ աշխարհը, ամենահեռաւոր աստղերի շարժուելը երկնալին տարածութեան մէջ և բիւրեղների բարձրութիւնը երկրի խորքում, ուր աչք չէ դիպել. այն, որ սաղմը կենդանացնում է ձուի մէջ և կենագործում նորածին մանկան մանրիկ մատները, որ կեանք է տալիս ամեն մի թերթիկի և ծաղկի, և որ ապրում է միայնակ անպարօւնակ ծովի խորքում, և նորա պալծառ մակերևոյթի վերալ, և լեռների մամուռով ու որքինով ծածկուած գագաթների վերալ, և մարդկային հոգու մէջ:

Եւ մարդը խորասուզուած օկսաւ ուշադրութեամբ դիմել: Բայց Հրեշտակը իւր թևը դիպցրեց նո-

բան, և մարդը գլուխը ցած գցեց և բարեպաշտ շշուկով շշնչաց. «Սա Աստուած է»:

Հրեշտակը փակեց մարդու աչքերը: Եւ երբ նա նորից բաց արեց, մարդը տեսաւ, որ մէկը անցնում է նոցա մօտից: Դա հոգին էր, արտաքուստ զգեստաւորուած և մարդու կերպարանք մտած, որովհետեւ Հրեշտակին Աստուած իրաւունք էր տուել ինչպէս զգեստ հագցնել հոգուն արտաքուստ, այնպէս էլ մերկացնել. և մարդը ճանաչեց անցուրականին:

Հրեշտակը հարցրեց նորան. «Քիտեմս ալդ ով է»:

Մարդը պատասխանեց. «Քիտեմ ով է», և նալեց նորա ետեից:

Հրեշտակը հարցրեց. «Ներեցի՞ր աղջեօք նորան»:

Մարդը այսքան միայն ասաց. «Բնչքան գեղեցիկ է եղբայրս»:

Հրեշտակը նալեց մարդու աչքերին և փակեց իւր սեպհական պատկերը—ալդ աչքերից բղխող լուսը կուրացնում էր իրան: Եւ մեղմ կերպով ժպտաց ու վերադարձաւ Աստծու մօտ:

Եւ երկու մարդիկ եղբայրացան երկրիս վերալ:

Ես զարթեցի:

Իմ գլխավերեւը կապոյտ, կապոյտ երկինքն էր, իսկ հեռաւում, ներքեւ, ալիքները խփւում էին ափին: Ես անցնում եմ մատուռի միջով, նալում եմ Աստուածամօրը կապոյտ և կարմրով, խաչակիր Յիսուսին, հոռվմէական զինուորներին և աստուածալին Մանկան եղծուած նկարին, և զառիվալր շաւզով իջնում եմ մեծ ճանապարհին: Երկու կողմերից բարձրանում էին ձիթենու ծառեր իրանց մոլու պտուղներով և պս լծառ տերևներով, իսկ քարեալ պատերի արանքներից դուրս էին նալում մանրիկ ձնծաղիկներ: Կարծեմ թէ իմ քնած միջոցին անձրւը նորոգել էր ամբողջ բնութիւնը: Ինձ

այնպէս է թւում, որ երբէք ես ալդպէս գեղեցիկ չէի
տեսել երկինքն ու երկիրը:

Իջնում եմ ճանապարհով, և նախկին լոգնութիւնս
ու զառամութիւնս էլ չեմ զգում ամեննեին:

Նաւղի վերայթվ վերևից ահա իջնում է մի զիւ-
ղացի մանուկ. նա քշում էր մի էշ, որի երկու կողքե-
րից երկու մեծ կողով էր բարձած. մանուկը դուրս եկաւ
ճանապարհի վերայ և սկսաւ գնալ իմ առջևից. Առաջ
երբէք չէի տեսած նորան: Բայց ես սրտով ուզում էի
նորա հետ կողք կողք միասին գնալ և նորա ձեռքը
բռնել—այլ սակայն նա չէր կարող հասկանալ, թէ ես
ինչու էի ալդպէս անում:

ԹԱՐԳՄ. ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. Ա. Ա. ՆԵՍԱՆՑ

